

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՎՈՐԻ ՈՏԱՆԱՎՈՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
Հայրապետյան Ա. Հ.

Հեթում Բ արքան, լինելով վանական, հետաքրքրական հիշատակարան է թողել, որն առանձնանում է անհատական մտածողության դրսևորումներով: Հիշատակարանը, լինելով չափածո ստեղծագործություն, նույնիսկ դասվել է պատմաքաղաքական վիպերգությունների շարքում՝ համեմատվելով Ներսես Շնորհալու *Վիպերգության* հետ: Վանական-արքայի երկը հիշարժան է ն՝ լեզվաբանական, ն՝ գրականագիտական տեսանկյուններից բացահայտելով առանձին մտավորականների լեզվում վկայված առանձին լեզվական և գեղարվեստական յուրահատկությունները, որոնց ուսումնասիրության ու քննության վերաբերյալ մեր դիտարկումները ներկայացրել ենք սույն հոդվածում: Լեզվի պատմության տեսանկյունից կարևոր և արդիական է առանձին հեղինակների լեզվի ուսումնասիրությունը, որը հնարավորություն է տալիս ամբողջացնելու տվյալ ժամանակաշրջանի լեզվի լիարժեք պատկերը:

**Բանալի բառեր.** Հեթում Բ, հիշատակարան, գրաբար, միջին հայերեն, լեզվի պատկերավորման միջոցներ, գրաբարյան ոճեր, բառիմաստ, քերականական ձևեր:

Կիլիկիայի Հեթում Բ թագավորը (1289—1301թթ.), լինելով միջնադարի ամենաառեղծվածային կերպարներից մեկը, պարբերաբար հայտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Քննարկման նյութ են եղել թե՛ նրա քաղաքական, թե՛ մշակութային գործունեությունը:

Հանրահայտ են նրա պատվերով գրված **Աստվածաշունչ** մատյանը և **Ճաշոցը**, որոնք իրենց ուրույն տեղն ունեն հայ մշակույթի պատմության մեջ՝ առանձնանալով մի շարք յուրահատկություններով:

Այսպես՝ «Հեթում Բ-ի գրչագիրը մեր սակավաթիվ այն հնագույն ձեռագիր **Աստվածաշունչներից** է, որոնք սկզբից մինչև վերջ ունեն գլուխների բաժանումներ՝ կատարված լատինական Վոլլգատայի հետևությամբ» [3, էջ135]:

Հետաքրքրական են նաև Հեթում Բ. արքայի կենսագրական փաստերը, ապրած և կառավարած պատմաքաղաքական ժամանակաշրջանը, անձնական ողբերգությունը. «Հեթում Բ. թագավորն իր փաստացի կառավարման 18 տարիների ընթացքում վեց անգամ հրաժարվեց գահից՝ մտնելով վանք, և նույնքան անգամ էլ վերադարձավ արքունիք: Ի վերջո, նա ընդունեց կաթոլիկ դավանանք և, հարելով ֆրանցիսկյան միաբանությանը, լքեց պետության կառավարումը: Միաժամանակ նա երկրում գլխավորում էր լատինասերների հոսանքը՝ պահանջելով, որ հայերը նույնպես ընդունեն կաթոլիկություն» [3, էջ 138]:

Այս ամենով հանդերձ՝ նա ստեղծագործել է և իր իսկ կողմից պատվիրած Աստվածաշունչ մատյանում իբրև հիշատակարան թողել է 1295 թվականին գրված *Ոտանաւոր Բարեպաշտի Թագաւորին Հայոց Հեթմոյ* հետաքրքրական քերթվածը: «Զսոյն զայս յիշատակարան յատկապէս յօրինեալ եւ գրեալ է բարեպաշտ և ուսումնասէր թագաւորն Հայոց Հեթում Բ. ի վերջ Աստուածաշնչի միոյ ընտիր օրինակի գոր յԻւր ի վայելս զաղափարեալ է յընտրելագոյն օրինակէ Ստեփաննոս անուն ծերունի ոմն ի վերայ մագաղաթի, բոլորագիր, գեղանի գրչությամբ թուին Հայոց ՉԽԴ եւ ի փրկական՝ 1295.... ԱԻՐՀՆՈՒԹԻԻՆՆ ՈՐ ԿԱՐԴԱՅ, ԳՈՎՈՒԹԻԻՆ ՈՐ ԼՍԷ, ՓԱՌՔ ՏՈՒԱԻՂԻՆ, ԵԻ ՅԻՇԱՏԱԿ ԳՐԶԻՆ, ԱՄԵՆ, ԹՈՒԱԿ. ՉԽԴ. ԳՐԵՅԱԻ» [2, էջ 42]:

Ի դեպ, հիշարժան է այն փաստը, որ «Արարատ» ամսագրի խմբագրությունը, նկատելով և կարևորելով հիշյալ քերթվածի՝ որպես ինքնուրույն ստեղծագործության արժեքը, առանձնացրել է Աստվածաշունչ մատյանից և առանձնաբար տպագրել է՝ ընդգծելով հեղինակային յուրահատկությունը. «Յիշատակարանս այս թեպետ քանիցս ընծայեալ է ի լոյս ի վերջ Աստուածաշնչոյ, այլ հարագատ բնագիր մանաւանդ եւ ինքնաձեռագիր օրինակն գոր ունիմք ի մատենադարանի Ս. Աթոռոյս առաքելական, իդձ մեծ ազդեաց մեզ հրատարակել միջոցաւ Արարատայ վայելս և ի յագուրդ հետաքրքրության բանասիրաց» [2, էջ 42]: Այս երկին անդրադարձել է նաև «Միոն» ամսագրի խմբագրությունը՝ հրատարակելով այն ի շարս այլ հիշատակարանների և ամբողջությամբ քառատող բանաստեղծական տների տարբերակելով [7, էջ 174-176]:

Նշենք, որ «Արարատ» և «Միոն» ամսագրերի ներկայացրած տարբերակներում կան որոշակի տարբերություններ, ինչպես՝ Բռով արտաքինք իմ պաճուճին/Միոն/ Բռռով արտաքոյքս իմ պաճուճին /Արարատ/, Նան յապայս գոլ յիշատակ /Միոն/ Մա յապայս գոլ յիշատակ /Արարատ/, Ջոր ի նախկի սկսեալ սկզբաց /Միոն/ Ջոր ի նախնի սկսեալ սկըզբաց /Արարատ/, որոնք, անշուշտ, պայմանավորված են գրչագրական աղբյուրների տարբերությամբ:

Նկատենք, որ Հեթում Բ-ի հիշյալ ստեղծագործությունը, դասվելով պատմաքաղաքական վիպերգության շարքին, արժանացել է բարձր գնահատականի՝ համեմատվելով նույնիսկ Ներսես Շնորհալու «Վիպասանության» հետ. «Ներսես Շնորհալու «Վիպասանության» հետ նույնական կապ ունեն նաև Հեթում Բ թագավորի և Սմբատ Մպարապետի քերթվածները» [6, էջ 156-157]: Բարձր է գնահատվել նաև կիլիկյան արքայի բանաստեղծական ձիրքը. «Հեթում թագավորը օժտված մատենագիր է. ձևական հարցերում նա ինքնուրույն է, ճաշակ է դրսևորում, հրաժարվել է նույնահանգությունից, գրել զուգահեռ հանգերով: Այս հանգամանքը դրականաբար է ազդել որակին» [6, էջ 156-157]:

Այս ստեղծագործությունն ուշագրավ է և՛ որպես հիշատակարան, և՛ որպես ինքնուրույն երկ՝ չափաճո գործ՝ գրված վանական-արքայի ձեռամբ: Ըստ էության՝ այն գրական ժանրերի համադրություն է՝ ինքնաբուխ անկեղծ շարադրանքով: Հեթում Բ-ն, ներկայացնելով իր տոհմի պատմությունը, խոսում է նաև տվյալ ժամանակաշրջանի, անձնական ապրումների, նույնիսկ Ջատկի տոնին վերաբերող անհամաձայնությունների մասին ապաշխարող վանականի և արքայի անունից՝ արտահայտելով հետաքրքրական և ինքնատիպ աշխարհընկալումն ու զգացումը: Նարեկացիական ոգով շարադրանքն ամբողջովին տոգորված է ապաշխարող մարդու անկեղծությամբ՝ բացահայտելով իրականության իր ընկալումը՝ *Հեթում անուամբ լոկ թագաւոր, Ներքոյ աղքատ եւ պարտաւոր, Քանզի կոչիմ իշխան հայոց, Բայց ես իշխիմ յախտից իմոց*<sup>\*</sup>: Նուրբ հոգեբանական զգացողությունը, սակայն, տեղի է տալիս, երբ պետք է ներկայացնել թվական տվյալներ՝ հիշատարականներին բնորոշ չափազանց կարևոր հատկանիշ. *Որոյ*

---

\* Բոլոր մեջբերումները վերցրել ենք «Միոն» և «Արարատ» պարբերականներում առկա տարբերակները համեմատելով:

*գրութիւնս աւարտեցաւ Մինչ մեր ամացս թիւ լցաւ, Եօթն հարիւ ընդ քառասնի, Եւ այլ չորից հայոց թուի:*

Գեղարվեստական խոսքին հատուկ պատկերավորությունը ևս դրսևորվում է ինքնատիպությամբ, օրինակ՝ իրենց տոհմը սկզբնավորող իշխանին համեմատում է Նոյի հոտ, ինչպես՝ *Յայն հեղեղէ Ռուբէն գերծեալ, Որ ի Գազկայն զարմէ սերեալ, իբրու տապանն այն Նոյի, որ Էբաց զերկիրս այս մեր տոհմի:* Բանաստեղծական հետաքրքիր ընկալմամբ որդիներ ունենալու հանգամանքը արտահայտում է ճաղկել բառով, ինչպես՝ *Ապայ Լեօնն պայազատեալ, Այն որ էրէք որդւով ճաղկեալք, Քանզի Թորոս եւ Ստեֆանէ Ընդ Մլեհի ծնան ի նմանէ:* Կամ բազմազգ երկիրը համեմատում է ալեծուփ ծովի հետ, ինչպես՝ *Ի բազմահոյլ ծփանս այաց Յորումն աշխարհ կայր յայլազգեաց...* Գույների խտացմամբ նկարագրում է մայրաքաղաքի գրավումը. *Եղէ խաւար մեզ անհնարին, Անմխիթար սուգ ցաւագին, քանզի առին քաղաքն Արքայ, Եւ զբոլորսն որք ընդ նմա:*

Պատկերավորման միջոցներից առանձնանում են իրենց յուրահատկությամբ համեմատությունները, որոնք առավելագույնս են արտահայտում հեղինակի մտածողությունը և աշխարհընկալման ինքնատիպությունը, ինչպես՝ *որպէս առիծ մոնչելով, որպէս ճնճողուկք յորսոյ գերծաք* և այլն:

Հեղինակը հետաքրքրական պատկերներ է ստեղծել Աստվածաշնչում և առակներում առկա հանրահայտ իրողությունների ակնարկմամբ՝ միաժամանակ դրսևորելով նուրբ դիտողականություն, նոր տարբերակային ձևեր կազմելով, ինչպես՝ *Եւ ըստ նեխեալ գերեզմանին, Բռովք արտաքինք իմ պաճուճին: Կամ հեղեղաւ ընկղմելոյ, Ճեղ ի ցամաք զձեռն իւր ձգելոյ: Հովիվն եղ զանձն ընդ ոշխարաց, մատնեալ զոսկերս իւր նշխարաց:*

Թեև ողջ ստեղծագործությունը գրաբարով է շարադրաված, սակայն հանդիպում են գրաբարին անձանոթ լեզվական իրողություններ, օրինակ՝ Ֆ հնչյունի կիրառումը՝ *Ստեֆանէ*, որը, եթե նկատի ունենանք ժամանակաշրջանը և Կիլիկիայում գործառվող հայերենի յուրահատկությունները, պետք է համարել բնականոն: Վկայվել են իմաստային նոր կիրառություններ, օրինակ՝ *Չապէլ դշխոյ դուստր սորայ, Չուգեալ տիրեաց զկնի նորայ, Սա արքային Հեթմոյ լծեալ զԼեօնն արքայ հայրն իմ ծնեալ:* Այս փոքրիկ հատվածում ուշագրավ են զուգեալ և լծեալ բառերը, որոնցից մեկը կիրառված է միջինհայերենյան՝ դառնալ [4, հ. Ա, էջ 220] իմաստով, իսկ մյուսը գրաբարում հայտնի լծակցել

ամուսնանալ [5, հ. 1, էջ 889] բառի նմանությամբ գործածվել է հենց այդ իմաստով:

Վկայվել է նաև գուն գործել հարադրությունը, որը տեսնում ենք միայն Արմատական բառարանում՝ իբրև առանձին անգործածական արմատ, որը հարադրվում է գործել, դնել բայերի հետ՝ կազմելով գրաբարյան ոճեր՝ գուն գործել, գուն դնել՝ վնասել, ջանալ, ջանք գործ դնել իմաստներով [1, հ. 1, էջ 592]. *Բազում ամրոցս ըմբռելով, Եւ զքրիստոնէայս կոտորելով: Որ եւ յաշխարհ մեր արշավէր, Երիցս անգամ զայս գուն գործէր...*

Կիրառել է այլ գրաբարյան ոճեր ևս՝ դրսևորելով բանաստեղծական նուրբ ճաշակ, օրինակ՝ *Որ վասն ազգիս մեր եւ երկրի, Ջանձն իւր դնելով չորսու գերի: Ի բաց թողուլ բաջադէին, Չորեքտասան օրն ընտրէին: Իսկ մեր զուղիդն դատեցար...*

Բանաստեղծական պատկերն ավելի տպավորիչ դարձնելու համար կիրառել է նաև առավելաբար միջին հայերենին բնորոշ շրջասույթ՝ ազգ նետողաց, որը դիտվում է իբրև մակդիր մոնոլոլ –թաթարների, իբրև կովաբարո և վարժ նետաձիգների (տե՛ս 4, հ. Բ, էջ 190): *Ձի յորս էաք մեր ասպաստան՝ Ազգ նետողացն հեղզացան:*

Ինչ վերաբերում է քերականական ձևերի դրսևորմանը, ապա այս պարագայում ևս գերիշխում են գրաբարյան ձևերը. այսպես՝ ներգոյականի իմաստը հիմնականում արտահայտվել է նախդրային ձևերով, ինչպես՝ *Ստացայ անկեայս եւ չարաչար՝ Կանօք ի սուգ անմխիթար... ի ծփանս այաց*, կամ՝ *Որպէս առիւծն մոնչելով, Չմեզ յորովայնս համարելով...* սակայն վկայվել է միջին հայերենի համար նորակազմություն համարվող ներգոյականի –ում ձևային և ի նախդրով կամված տարբերակ. *Օրհնեալ գնա ընդ Հօրն իւրում, Եւ ընդ Հոգւոյն իւրոյ սրբում, Միշտ եւ յաւէտ եւ յապառնում, Չերիսն ի մի բնութեան նոյնուն*: Ընդ որում, օրինակից ակնհայտ է, որ **ում** հնչյունախումբը նպաստում է հանգավորման ձևավորմանը:

## НЕКОТОРЫЕ ЗАМЕЧАНИЯ О СТИХЕ КОРОЛЯ ХЕТУМА II

Айрапетян А. Г.

Король Хетум II, будучи монахом, оставил интересную мемуарную запись, которая выделяется с точки зрения индивидуального мышления. Стихотворение, будучи поэтическим произведением, было даже классифицировано как историко-политический стих, по сравнению с

эпилогом Нерсеса Шнорали. Стихотворение монаха-короля интересно и́ с лингвистической, и́ с литературной точек зрения; изучая языковые и художественные особенности стиха Хетума II, мы представили наши наблюдения в этой статье. С точки зрения на историю языка, важно и актуально изучение языков отдельных авторов, что и позволяет иметь полную картину о языке данного периода.

**Ключевые слова:** Хетум II, диалект, грабар, Средневековый армянский язык, визуализация языка, древнеармянские стили, значение слова, грамматические формы.

## A FEW OBSERVATIONS ON THE RHYME OF HATHUM THE SECOND KING

Hayrapetyan A. H.

Hathum the Second King, being a monk, wrote an interesting memoir, which stands out in its individual manifestations. The memorial is a verse and it is included in the series of historical-political poems and even compared with the poem of Nerses Shnorhali. And from linguistic and literary standpoint, this work is memorable, revealing the linguistic and artistic peculiarities of intellectuals whose observations we have presented and discussed in this article. From the point of view of language history, the study of the language of individual authors is important and relevant, enabling a complete picture of the language of that period.

**Keywords:** Hetum II, dialect, Grabar, Middle Armenian, language visualization, Grabar styles, literal, grammatical forms.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Հր. Հայերեն արմատական բառարան: հատոր I: Երևան: Երևանի պետ. համալսարանի հրատարակչություն: 1971: 698 էջ:
2. «Արարատ» ամսագիր: Կրօնական: պատմական: բանասիրական եւ բարոյական: Թիւ Բ: Յունիս: 1869: 39-42:
3. Խաչատրյան Ա. Աստվածաշնչի ոսկանյան տպագրության առեղծվածը:// Բանբեր Մատենադարանի: 2018: 25: էջ 133-165:
4. Ղազարյան Ռ.: Ավետիսյան Հ. Միջին հայերենի բառարան: Հատոր Ա: Երևան: Երևանի պետ. համալսարանի հրատարակչություն: 1987:

- 418 էջ: Հատոր Բ: Երևան: Երևանի պետ. համալսարանի հրատարակչություն: 1992: 467 էջ:
5. Նոր բառգիրք հայերեն լեզուի: Հատոր առաջին: Երևան: Երևանի պետ. համալսարանի հրատարակչություն: 1979: 1140 էջ:
  6. Մադոյան Ա. Պատմաքաղաքական վիպերգություն:// Բանբեր Երևանի համալսարանի: 1983: 3 (51): էջ 149-159:
  7. Սիոն: Կրօնական: գրական: բանասիրական պաշտօնաթերթ Երուսաղեմի Հայ Պատրիարքութեան: Փետր.-մարտ: 1966: էջ 174-176:
  8. Քոթանջյան Ս. Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը և ոսկանյան հրատարակությունը: Էջմիածին: 1966: Նոյեմբեր-դեկտեմբեր: էջ 103-109:

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Հայրապետյան Ա. Հ. – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Շիրակի պետական համալսարան  
Էլ.փոստ [a\\_hayrapetyan@list.ru](mailto:a_hayrapetyan@list.ru)*

*Տրվել է խմբագրություն 22.10.2019*